ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2026 թվականի N 0016-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել Արարատ համայնքի վարչական տարածքի, գյուղ Արարատ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-015-0050-0050 ծածկագիրը կրող հողամասից 1.19296 հա մակերեսով հողատարածք առանձնացնելու և հասցեավորելու.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արարատ համայնքի վարչական տարածքի, գյուղ Արարատ բնակավայրում գտնվող, 03-015-0050-0050 ծածկագիրը կրող հողամասից առանձնացնել 1.19296 հա մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ գյուղ արտադրական նշանակության օբյեկտների հողատեսք, դարձնել առանձին գույքային միավոր՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հատակագծերի:

2. Առանձնացվող մասին՝ 1.19296 հա մակերեսով հողատարածքին տրամադրել հասցե՝ համայնք Արարատ, գյուղ Արարատ, Սահմանապահների փողոց 5/2 հողամաս /ծածկագիր՝ 03022FRSEGYD/:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

12 հունվարի 2026 թ.
ք. Արարատ